ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 1/10.5

«3» հոկտեմբերի 2013թ. ք. Երևան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ «ՊԱՏՄԱԿԱՆ ԵՎ ՌԵԳԻՈՆԱԼ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ» ՈՒ «ՄԻՆԵՐԱԼՈԳԻԱՅԻ ԵՎ ՊԵՏՐՈԳՐԱՖԻԱՅԻ ԱՄԲԻՈՆ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄՆԵՐԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 2-րդ և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետերով Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը

ո ր ո շ ո ւ մ է.

1. Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի «Պատմական և ռեգիոնալ երկրաբանության ամբիոն» ու «Միներալոգիայի, և պետրոգրաֆիայի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումները միացման եղանակով վերակազմակերպել Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի «Ռեգիոնալ երկրաբանության, պետրոլոգիայի և օգտակար հանածոների հանքավայրերի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանման։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

ՈՐՈՇՈՒՄ N 1/10.6

«3» հոկտեմբերի 2013թ. ք. Երևան

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՐԿՐԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ «ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅԱՆ ԱՄԲԻՈՆ» ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ՍՏՈՐԱԲԱԺԱՆՈՒՄԸ ՎԵՐԱԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Սերվիս» մասնագիտության սպասարկման համար ամբիոն ունենալու անհրաժեշտությունը և ղեկավարվելով Երևանի պետական համալսարանի կանոնադրության 30-րդ կետի 2-րդ և Երևանի պետական համալսարանի գիտական խորհրդի կանոնակարգի 4-րդ կետի 2-րդ ենթակետերով Երևանի պետական համալսարանի գիտական խորհուրդը

ո ր ո շ ո ւ մ է.

1. Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի «Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումը բաժանման եղանակով վերակազմակերպել Երևանի պետական համալսարանի աշխարհագրության և երկրաբանության ֆակուլտետի «Սոցիալ-տնտեսական աշխարհագրության ամբիոն» և «Սերվիսի ամբիոն» կառուցվածքային ստորաբաժանումների։
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից։

ԵՊՀ գիտական խորհրդի նախագահ՝ Ա. Հ. ՍԻՄՈՆՅԱՆ